ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ XVIII—XIX ԴԴ. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ըստ Լենինգրադի և Մոսկվայի նյութերի)

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրական արշավախումբը «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի համար նյութեր հավաքելու նպատակով վերջին տարիներս հավաքչական աշխատանքներ է ծավալում Ռուսաստանի, Ուկրաինայի և Մոլդավիայի հայկական նախկին գաղթավայրերի տարածքներում։ Հուշարձանների վրա և թանգարանային ֆոնդերում պահպանվող իրերի մակագրությունները արժեքավոր վկայություններ են պարունակում այդ վայրերի հայոց հոգևոր, կրթամշակութային հաստատությունների և քաղաքական անցուդարձերի մասին։ Արձանագրություններում հիշատակվում են հայազգի ականավոր գործիչներ (զինվորականներ, ուսուցչապետեր, հոգևորականներ, առևտրականներ, արդյունաբերողներ և այլն), որոնք նշանակալի դեր են խաղացել հայ, ռուս, ուկրաինացի և մոլդավ ժողովուրդների դարավոր կապերի հաստատման ու ամրապնդման գործում։ Ստորև առաջին անգամ հրապարակում ենք Լենինգրադի և Մոսկվայի վիմագիր ու թանգարանային առարկաների արձանագրություններից մի քանիսը։

Ռուսաստանի հայության խոշոր գաղթօջախներից էր Սանկտ-Պետերբուրգը, որ իր ծաղկումն ապրեց XVIII—XIX դդ.։ Կայսրության առևտրի, արդյունաբերության, մշակույթի և արտաքին հարաբերությունների ոլորտներում աչքի ընկնող դեր խաղացին նաև այստեղ բնակություն հաստատած հայ ընտանիքները։ Լենինգրադում առ այսօր պահպանվել են ճարտարապետ Ա. Ֆելտենի նախագծով՝ 1779 թ. կառուցված հայկական երկու եկեղեցիները, որոնցից ս. Եկատերինան գտնվում է Նևսկու պողոտայի վրա, իսկ ս. Հարությունը՝ Վասիլևյան կղզու Սմոլենսկյան կոչվող հայկական գերեզմանոցում։ Այստեղ են թաղված բազմաթիվ անվանի հայորդիներ, որոնց կոթողային հուշարձանների մեջ աչքի է ընկնում Ռուսաստանում հայկական տպագրության գործի սկզբնավորող Գրիգոր Խալդարյանի տապանաքարը։ Տապանագիրը վկայում է, որ Գր. Խալդարյանը ծնունդով Սպահանից է, մանկության տարիներն անց է կացրել Նոր Ջուղայում, ապա շրջագայել է Հնդկաստանում, Անգլիայում և այլուր։ Լոնդոնում եղած ժամանակ ձուլել է հայերեն տառեր և առաջին անգամ այստեղ հրատարակել «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց։ Թարգմանութիւն ի հայկական լեզուէ ի լատին բարբառ ի Յոհաննիսէ Սկրոդերանէ գերմանացւոյ։ Եւ արտահանեալ ի Գանձ Արամեան կոչեցեալ գրգոյն աշխատութեամբ Ջուղայեցի Խոջամալի որդւոյ Գրիգորի, ի Լոնդոն, տպ. Ռիվինգտոն, 1780 թ.» վերտառությամբ գիրքը[1]։ 1781 թ. Գր. Խալդարյանը բնակություն է հաստատում Պետերբուրգում, ուր և իրագործում է իր վաղեմի փայփայած երազանքը՝ հիմնում է հայկական տպարան։ Պետերբուրգում հրատարակած նրա առաջին գիրքը կոչվում էր «Այբբենարան» (1781 թ.)[2]։ Այն լույս ընծայվեց ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հ. Արղությանի հորդորանքով և նկատելի դեր խա-

---

1 Վ. Ա. Դիլոյան, *Լաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Երևան, 1966, էջ 185—186։*

2 Գ. Լևոնյան, *Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 166։*

զաց հայ մանուկների կրթության գործում[3]։ Գր. Խալդարյանը Պետերբուրգում կազմում և հրատարակում է հայ-ռուսերեն բառարան՝ «Գիրք, որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան» վերնագրով[4]։ Այս երախտավորի կյանքի ու գործի մասին հակիրճ փորագրված է նրա տապանաքարին, որ այժմ գտնվում է Լազարյանների կառուցած ս. Հարություն եկեղեցու արևելյան կողմում։ Սև գրանիտե երկաստիճան պատվանդանին դրված ուղղանկյուն-քառանկյուն տապանաքարի երեսին և կողերին փորագրված է։

Տապանաքարի երեսին.

ՔԱՐԵԱ ՏԱՊԱՆՍ ԱՅՍ ԲԱՂՁԱԼԻ
ՆՆՋԵՅՆԵԼՈՅ ՀԱՆԳԻՍՏ ԿՈՉԻ
ԱՍՏ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՅ ՊԱՀԵՍՏԻ
ՄԱՐՄԻՆՆ ՕՐՇՆԵԱԼ ԳՐԻԳՈՐԻ.
ՍԱ ԷՐ ՈՐԴԻ ԲԱՐԵՊԱՇՏԻ
ԽԱԼԴԱՐԵԱՆՑ ՏՈՀՄԷ ԽՕՋԱՄԱԼԻ.
ԾՆԵԱԼ ԵՂԵԻ ԱՅՍ ՅԱՆԿԱԼԻՆ
ՀԱՋԱՐ ԵՕԹՆ ՀԱՐԻՒՐ ՅԱՄԻ
ՓՐԿՉԻՆ ԵՐԵՍՆԵԱԿ ԵՐԿՈՒԻ
ՆՈՅՆ ԿԱՐԳԻՆ ՕՐ ԵՐԵՍՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ.
ՈՐ ԷՐ ՅԵՐԿՐԷՆ ՍՊԱՀԱՆՈՒ
ԵՒ ԲՆԱԿԻՉ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ,
ԱՊԱ ՏԱՆԷ ԻՒՐՄԷ ԵԼԵԱԼ,
ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԳԱՅԵԱԼ.
ՍԱ ԷՐ ՀՄՈՒՏ ՎԱՃԱՌԱԿԱՆ,
ՅՈՅԺ ՍԻՐԵՅԵԱԼ Ի ՄԷՋ ՄԱՐԴԿԱՆ,
ՎԱՐՍ ՍՏԱՅԵԱԼ ՊԱՐԿԵՇՏԱԿԱՆ,
ՀԵՌԱՅԵԱԼ ՇԱՒՂԱՅ ԱՆԿԱՐԳ ԱՐԿԱՆ,
ԱՄՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՏԱՌԻՒՔ ՎԱՐԺԵԱԼ
ԲԱՐԵԱՅ ԳՈՐԾՈՅ ՄԻՇՏ ՀԵՏԵՒԵԱԼ.
ԹԷՊԷՏ ԷՐ ՍԱ ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼ,
ԲԱՅՑ ԱՆՁԱՒԱԿԻ ՎԻՃԱԿ ՍՏԱՅԵԱԼ,
ՁԱՒԱԿԱՆ ՄԱՀ ԻՆՔԵԱՆ ԹՈՂԵԱԼ,
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԿԱՋՄԵԱԼ,
ՁԱՆԱՁԱՆ ՏԱՌԻՒՔ ՇՔԵՂԱՅՈՒՅԵԱԼ,
ՏՊԻՒՔ ԳՐԵԱՆՍ Ի ԼՈՅՍ ԱԾԵԱԼ,
ՁԵՒ ԵՒՍ ԲՈԼՈՐՆ ԿԱՏԱՐԵԱԼ,
ՕՐ ՎԱԽՃԱՆԻՆ ՎԵՐԱ ՀԱՍԵԱԼ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՏԻԵԱՌՆ ՍՊԱՍԵԱԼ,
ՅՈՒՍՈՎ ՆՈՐԻՆ ԱՌ ՆԱ ԴԻՄԵԱԼ,
ՍԱ ԿՈՉՈՂԻՆ ԻՒՐ ՀՆԱՁԱՆԴԵԱԼ,
ՅԱՆՅԱՒՈՐԷՍ ՍԱ ՀՐԱԺԱՐԵԱԼ,
ՈՒՆԱՅՆ ԿԵՆԱՅՍ ԱՌ ՏԻԷՐ ՓՈԽԵԱԼ,
ՅԱՒԻՏԵՆԻՑ ՀԱՆԳԻՍՏՆ ԳՆԱՅԵԱԼ,
ԹԻՒ ՓՐԿՉԱԿԱՆ ՀԱՋԱՐ ԵՕԹՆ
ՀԱՐԻՒՐ ԵՒ ՈՒԹՍՈՒՆ ԵՕԹՆ ԱՄ
Ի ՆՈՅՆ ԴԱՍԷ ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ
ՅՈԳՈՍՈՒՏՈՍ ԱՄՍԻ
ԳՆԱՑ ԿԱՅԱՆՍ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ
ՏԵՂԻ ԿԱՅՍԵՐԱՆԻՍՏ ՄԵԾ ՔԱՂԱՔԻ,
ՈՐ ՍԱՆԿԹ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ ՎԵՐԱՁԱՅՆԻ,

---

3 Վ. Ա. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 186։

4 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1975, էջ 738—739։

ԿԵԱՆՍ ՎԱՐԵԱԼ ՅԻՍՈՒՆՀԻՆԳ ՏԱՐԻ
ԱՄԻՍՍ ՏԱՍՆ ԱՒՈՒՐՍ ՈՒԹ Ի ՆՈՅՆ ՇԱՐԻ
ԱՅՍՔԱՆ ԵՒ ԿԵԱՆՔ ՍՄԱ ԵՂԵԱԼ,
ՈՐ ՅԱՇԽԱՐՀԻ ՊԱՆԴԽՏԱՅԵԱԼ,
ՋԱՄՈՒՍԻՆՆ ԻՒՐ ԼԱԼՈՎ ԹՈՂԵԱԼ,
ԵՒ ԲԱՐԵԿԱՄՍՆ ՏՐՏՄԵՑՈՒՅԵԱԼ.
ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂՔ ՅԱՅՍ ՏԱՊԱՆԻ,
ՅԻՇՄԱՆ ԱՌՆԷՔ ՍՄԱ ԱՐԺԱՆԻ
ԱՌ ՏԷՐՆ ՓԱՌԱՑ ԱՄԵՆԱՅՆԻ՝
ԼՆԴՀԱՆՈՒՐ ԱՋԱՆՑ ՍՏԵՂԾՈՂԻ,
ՓԱՌՍ ՏԱՅՈՒՔ ԷԻՆ ԵՐԿՆՒ-
ՄԻՇՏ ՅԱՒԻՏԵԱՆՍ ՅԱՒԻՏԵՆԻ։

Արևմտյան (նակատային) կողին.

Ի ՆԵՐ ՇԻՐՄԻՍ ԵԴԵԱԼ Է ՄԱՐՄԻՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԱՋԳԱՍԷՐ ԱՋՆԻՒ ԳՐԻԳՈՐ ԽՈՋԱՄԱԼԵԱՆ ԽԱԼԴԱՐՈՎԻՆ, ՎԱԽՃԱՆԵԼՈՅ 1787 55 ԱՄԱՑ ԵՒ ԿՆՈՋՆ ԿԱՏԱՐԻՆԷՒ ՋԱՔԱՐՈՎՆԱՅԻ՝ 84 ԱՄԱՅ Ի 11 ՆՈՅ, ԵՄԲԵՐԻ, 1823, ԸՍՏ ՊԱՏՈՒԻՐԻ ՍՈՐԻՆ ՈՐԴԵԳԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻՆ[5] ՋՈՍԿԵՐՍ ԱՌՆ ՀԱՆԵԱԼ Ի ՀԻՆ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԷ ԱՍՏ Ի ՄԻԱՍԻՆ ԱՄՓՈՓԵԱՑ Ի ՅԻՇԱՏԱԿ ԿԵՆՏԱՆԻ ԵՐԱԽՏԵԱՑ ՆՈՐԻՆ։

Տապանագրի հարավային կողին.

ПОДЪ КАМНЕМ СИМЪ ПОГРЕБЕНО ТЕЛО ГРИГОРІЯ/ИВАНОВИЧА ХАЛДАРОВА РОЖДЕННОГО ВЪ НОВОЙ ЖУЛЬФЕ/ОТКУДА ПРИНЯЛЪ ОНЪ ПУТЪ ВЪ РАЗНЫЯ ЗЕМЛИ: ВЪ ОСТЪ ИНДІЮ/ ВЪ АНГЛІЮ И НАКОНЕЦ ПЕРЕСЕЛИЛСЯ ВЪ РОССІЮ СЪ БЛАГИМЪ НА/МЕРЕНІЕМЪ ЗАВЕСТИ ТАМЪ АРМЯНСКОЕ КНИГОПЕЧАТАНІЕ/И ВЪ КОРОТКОЕ ВРЕМЯ ПРИВЕДЯ ТОКЪ СОВЕРШЕНСТВУ/ НЕ МОГЪ ДАЛЕЕ ПОЛЬЗОВАТЬСЯ ПЛОДАМИ СВОИХЪ ТРУ/ДОВЪ, ПОХИЩЕНЪ ПРЕЖДЕВРЕМЕННОЮ СМЕРТІЮ 1787/ГОДА АВГУСТА 8 ДНЯ НА 55 ГОДУ ОТЪ РОЖДЕНІЯ, ОСТАВЯ НЕ/СКОНЧАЕМОЕ БОЛЕЗНОВАНІЕ СУПРУГЕ И КОІМИ СИЕ/НАДГРОБІЕ ПОЛОЖЕНО.

Լենինգրադի Սմոլենսկյան հայկական գերեզմանոցում, եկեղեցու հարավային մուտքի աջ կողմի արտաքին պատին կից առ այսօր պահպանվում է երկաթյա ձողերով շրջափակված անշուք մի տապանաքար, որի տակ հանգչում է ռուսահայ գաղութի մշակույթի ու դպրության անխոնջ կին մշակներից մեկը՝ Մարիամ Մովսեսի Սարաֆյանը։ Ո՞վ էր այս հայուհին, որ հայտնի է Կլեոպատրա անունով։

1788 թ. Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանում լույս տեսավ «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան։ Ունի սա մասնաւոր այբբենարան, մաս-

---

5 *XVIII—XIX դդ. հայ ականավոր գործիչ Հարություն Արարատյանը Խալդարյանների ընտանիքի որդեգիրն էր (տե՛ս* «Жизнь Артемия Араратского», СПб., 1813, с. 1—2), *Կ. Դանիելյան, Հարություն Արարատյանի մեմուարները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 3), նույնի՝ Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961,* К. Н. Григорян, Из истории русско-армянских литературных и культурных отношений (X—начало XX вв.), Ереван, 1974, с. 137—139, *Պ. Ա. Զորանյան, Նոր նյութեր Հարություն Արարատյանի կյանքի ու գործունեության մասին («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1978, № 1, էջ 81—94), նույնի՝ Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 131—133։*

նաւոր բառարան, և սկզբունք քաղաքական ուսմանց. արարեալ և թարգմանեալ ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, և ի հայոց լեզուէ ի ռուսաց բարբառ. Կղեոպատրայ դստեր առ ի Քրիստոս հանգուցեալ Մովսէսի Սարաֆեան ի յօգուտ մարդկանց և ամենից, որք ունին զկարօտութիւն և զպիտոյս։ Ծախիւք Նոյնոյ Կղեոպատրայ հօր հանգուցեալ Մովսիսի»[6] խորագրով մի գիրք։ Այս ինքնուսույց ձեռնարկը փաստորեն առաջին դասագիրքն էր ռուսահայ գաղթօջախների տարածքում ու որպես այդպիսին զգալի դեր կատարեց հայոց լեզուն պրոպագանդելու և պահպանելու ասպարեզում։ Գրքի լույս ընծայման կապակցությամբ «Սանկտ-պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթը նույն՝ 1788 թ. տպագրեց մի հայտարարություն, որով ծանուցում էր, թե Ելիզավետա Սարաֆովան (Մովսես Սարաֆյանի կինը և Մարիամ-Կլեոպատրայի մայրը) վաճառում է մի գիրք, որի արժեքը առանց կազմի 2 ռուբլի է, իսկ կազմով՝ 2 ռուբլի 50 կոպեկ[7]։ Ռուսերեն այն կոչվում էր «Ключ познания букваря и некоторых из правозрения посредством коей каждой из россиян желающих обучаться армянскому, так и из армян российскому языкам без всякого постороннего руководства самым легчайшим образом сам собою может достигнуть своего намерения»[8]. Գրքի հրատարակությունը, ըստ երևույթին, ծրագրված է եղել նախօրոք և բխել է ժամանակի պահանջից։ Այդ գործում, անտարակույս, խոշոր դեր է ունեցել հեղինակի հայրը՝ Մովսես Սարաֆյանը, որը Հովհաննես Լազարյանի, Գրիգոր Կամպանյանի և այլոց ընկերակցությամբ 1769 թ. Եկատերինա II-ին ներկայացրել էր մի ծրագիր՝ բաղկացած ներածությունից և 14 հոդվածներից, Ռուսաստանի աջակցությամբ Հայաստանը աղատագրելու և ինքնուրույն թագավորություն ստեղծելու նպատակով։ Մովսես Սարաֆյանը ծնունդով Արարատյան նահանգից էր, թուրք-պարսկական պատերազմների ժամանակ տեղափոխվել էր Աստրախան և զբաղվում էր մետաքսագործությամբ։

Մարիամ-Կլեոպատրայի մասին են պատմում նրա տապանաքարի հյուսիսային և հարավային կողերին ագուցված սպիտակ մարմարե սալաքարերի արձանագրությունները, որոնք վարպետորեն փորագրված են հայերեն և ռուսերեն լեզուներով։

Հարավային կողին՝

ՍՅՍ Է ՇԻՐԻՄ ԱԶՆԻՒ ՄԱՐՄՆՈՅ
ՄԱՐԻԱՄԱՅ ՁՔՆԱՂ ՏԻԿՆՈՅ՝
ՍԻՐՈՂ ՈՒՍՄԱՆ ԵՒ ՀԱՆՃԱՐՈՅ
ԵՒ ՇԱՐԱԴՐԻՉ ՄԻ ԲԱՌ(՞) ԳՐՔՈՅ։

ՍԱ ՍԻՐԵՑԱՒ Ի ԹԱԳՈՒՀԻՒՆՈՅ
ԵԿԱՏԱՐԻՆ ՄԵԾ ԿԱՅՍՐՈՒՀԻՒՆՈՅ,
ՅՈՐՄԷ ԷԱՌ ԱՆՈՒՆ ՊԱՏՈՒՈՅ
ԿԼԷՈՊԱՏՐ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՒՆՈՅ։
ԴՈՒՍՏՐ ԷՐ ՍԱ ԱՌՆ ՄԵԾԱԶՆԻ
ԱՂԱ ՄՈՎՍԷՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ
ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՄԱՅՕՐ ՍԱՐԳՍԻ
ԼՕՌՈՒ ՄԵԼԻՔ ՔԱՋԱՏՈՀՄԻ,
ՈՐՈՅ ՀԱՍԵԱԼ ՕՐ ՎԱԽՃԱՆԻ՝
ԱՐՀԱՄԱՐՀԵԱՑ ԳՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ,
ՁՈՒԵԱՑ ՅԱՆԱՆՑՆ ՅԱՒԻՏԵՆԻ,
ՈՒՐ ՀԱՄԱՅՆԻՅՍ Է ՀԱՅՐԵՆԻ.
ԵԹՈՂ ՍՈՒԳ ՄԵԾ ԻՒՐ ԱՄՈՒՍՆՈՅ
ԵՒ ՄՕՐ ԻՒՐՈՅ ՈՂՈՐՄԵԼԻՈՅ,

---

6 Լ ե ո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 1056։

7 Центральный государственный архив древних актов (ЦГАДА), ф. 1252, д. 19.

8 Նույն տեղում, էջ 43։

ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ԱՋՆԻՒ ՈՐԴԻՈՅ
ԵՒ ՔԵՌՆ ԻՒՐՈՅ ՍԻՐԵԼՈՒՀԻՈՅ.
ԽՆԴՐԷ ԱՅԺՄ ՏԷՐ ԱՂԵՐՍԻՒ
ՀԻՇԵԼ Ի ՏԷՐ ՄԻ ՀԱՅՐ ՄԵՐԻՒ,
ԵՒ ՈՐՔ ՅԻՇԵՆՆ ՈՒՂԻՂ ՍՐՏԻՒ
ՅԻՇԵԼ Ա՛Լ ԼԻՅԻՆ ՆՈՎԻՆ ԲԱՆԻՒ։

ԾՆԵԼ Ա՛Լ ՅԱՄԻ 1765 ՄԱՐՏԻ 24 ԵՒ ԱՄՈՒՍՆԱՅԵԼ Ա՛Լ 1789 ԴԵԿՏԵՄԲԵՐ 5 ԵՒ ՓՈԽԵԼ Ա՛Լ Ի ՔՐԻՍՏՈՍ 1806 ՕԳՈՍՏՈՍԻ 2 Ի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։

Հյուսիսային կողի նուլնանման սալաքարերի արձանագրություններն են. առաջին սալաքարին.

ДРУГЪ СЕРДЦА МОЕГО, ДРУГЪ НЕЖНЫЙ И ЛЮБЕЗНЫЙ
НЕ ВНЯТЕНЪ ТЕБЕ СТОНЪ, ПЛАЧЪ МОЙ БЕСПОЛЕЗНЫЙ.
НЕ ВІШИМЫЙ ВЗОРЪ ПОМЕРКЪ ИЗ ЗА ВЕСЬ СОНМЪ ДОБРОТЪ
И СЕРДЦЕ ЧИСТОЕ УБЕЖИЩЕ СИРОТЪ.
ТЕБЯ УЖЪ БОЛЕЕ МОЙ ДРУГЪ НЕ УКРАШАЕТЪ
УЖАСНО ХЛАДНА СМЕРТЬ ВСЕ ВЪ ПРАХЪ ЗДЕСЬ ПРЕВРАЩАЕТ,
НО ДУХЪ ТВОЙ ЖИВЕТ ТАМЪ ВСЕЛЕНІЯХ НЕБЕСЪ
ОНЪ ВИДИТЪ ИСКРЕННОСТЬ ВОЗДЫХАНІЯ И СЛЕЗЪ,
КОТОРЫМИ В СЕЙ ЧАСЪ Я ПРАХЪ ТВОЙ ОРОШАЮ.
СВЕРШАЯ ТРИЗНУ ЗДЕСЬ К НЕМУ МЫСЛЬ ВОЗВЫШАЮ
...А СЛЕЗЫ МАТЕРІІ И СЕСТРЫ ВЪ НИХЪ ОТРАДА
ТЕПЕРЬ ИХЪ СДАНА...
НЕ СТАВ СОПУТНИКОМЪ НЕВИДИМЫХЪ СУЩЕСТВЪ.

Երկրորդ սալաքարին.

ВЗОВИ КО ГОСПОДУ ДА ДАСТЪ ИМЪ СТОЛЬКО СРЕДСТВЪ,
ЧТОБЫ ЛЮТЫЙ СКОРБИ ИХЪ И МУКИ ОБЛЕГЧАЛИСЬ
СТЕРЛИСЬ СЛЕЗЫ, ИХЪ ТЕРЗАНІЯ СМЯГЧАЛИСЬ.
МОЛИ, БЕЗЦЕННЫЙ ДРУГЪ, ЗИЖДАТЕЛЯ МИРОВЪ,
ДА БУДЕТЪ ИМЪ ЗАЩИТА И ПОКРОВЪ.
МОЯ ЖЪ ПЕЧАЛЬ И СТОНЪ ТОГДА ЛИЖЪ ПРЕКРАТЯТСЯ,
КОГДА С ТВОИМЪ МОЙ ПРАХЪ НАВЕКЪ СЪЕДИНЯТСЯ
ПУСТЬ ВЪ ЖЕРТВУ ГОРЕСТЯМЬ ОДИНЪ ДОСТАНУСЬ Я.
СВЕРШИЛОСЬ СО МНОЙ ВСЕ! ПРЕСЕКЛАСЬ ЖИЗНЬ ТВОЯ,
ОДНА ОТРАДА МНЕ ПИТАЛА ВООБРАЖЕНЬЕ
СІЕ СЛАДЩАЙШЕЕ С ТОБОЙ СОЕДИНЕНЬЕ
МОЙ ПРАХЪ ВМЕСТИТЪ СЪ ТВОИМЪ ПЕЧАЛЬНЫЙ И СЕЙ ЧЕРТОГЪ
МЫ КУПНО УЗРИМЪ ТО КАК СВЯТЪ И СИЛЕНЪ БОГЪ

Երրորդ սալաքարին.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОГРЕБЕНО ТЕЛО СУПРУГИ
СЛУЖАЩЕГО ВЪ ШТАТЕ КОММИСАРИАТСКАГО КОММИ.
СІОНЕРА 8-ГО КЛАССА СЕРГЕЯ ИСАЕВИЧА/ЛОРИСЪ
МЕЛИКОВА МАРІИ МОИСЕЕВОЙ ДОЧЕРИ УРОЖДЕННОЙ
САРАФОВОЙ[9], КОТОРАЯ ВЗЯТА БЫЛА В 1774 ГОДУ К

9 Ա. Յ ա. Կ ա կ ո վ կ ի ն ի «Памятники художественного серебра из армянской церкви св. Екатерины в Петербурге» հոդվածում (ՊԲՀ, 1981, № 2, էջ 213—222) Սարաֆյան (Սարաֆովեան) ազգանունը բնագրի օխալ վերծանության հետևանքով դարձել է Սարքո-

ВЫСОЧАЙШЕМУ ДВОРУ БЛА/ЖЕНОЙ И ВЕЧНО ДОСТОЙНОЙ ПАМЯТИ ГОСУ/ДАРИНЕЮ ИМПЕРАТРИЦЕЮ ЕКАТЕРИНОЙ АЛЕКСЕЕВНОЮ И ПО КРАСОТЕ ЕЯ ЛИЦА НАЗВАНА КЛЕО/ПАТРЕЮ. РОДИЛАСЬ В 1765 ГОДА МАРТА 24-ГО ДНЯ, СУПРУЖЕСТВО ВСТУПИЛА 1789 ГОДА, А СКОНЧАЛАСЬ ПРЕДСТАВИВШИСЬ 1806 ГОДА АВГУСТА 2-ГО ДНЯ. ЕЁ ЖИТИЕ БЫЛО 41 ГОД И ЧЕТЫРЕ МЕСЯЦА...

Նույն գերեզմանոցում են թաղված մի շարք հայ զինվորականներ, որոնց հուշակոթողների զգալի մասը տեղում չէ կամ տեղափոխված է Ալ. Նևսկու մենաստանի ցուցասրահ։ Դրանցից են.

Տապանաքար, *սպիտակ մարմարից գեղաքանդակ նախշազարդերով, նախկին տեղն անհայտ, այժմ գտնվում է ս. Հարություն եկեղեցու բակում։ Խաչքեվերի միջև հայերեն և ռուսերեն փորագրված է.*

ԳԵՆԱՐԱԼ—ՄԱԻՈՐ ԻՇԽԱՆ ՍԻՄԵՈՆ ԴԱՒԻԹԵԱՆ
ԱԲԱՄԵԼԻՔ—ԼԱԶԱՐԵԱՆՑ. ԾՆԱՒ Ի 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
1815 ԱՄԻ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ Ի 25 ԱՊՐԻԼԻ 1888 ԱՄԻ։

ГЕНЕРАЛЪ—МАІОРЪ/КНЯЗЬ СЕМЕНЪ ДАВЫДОВИЧЪ/АБАМЕЛИКЪ—ЛАЗАРЕВЪ/ РОД. 15 ОКТЯБРЯ 1815 Г./, СКОНЧ. 25 АПРЕЛЯ 1888 Г.

Գեներալ Ս. Աբամելիքը եղել է բանաստեղծ Մ. Լերմոնտովի մանկության ընկերն ու բարեկամը։ Կարճահասակ լինելու պատճառով նրան կոչել են «мальчик-спальчик»[10]։

Տապանաքար, *սպիտակ մարմարից, քանդակազարդ նախշերով, նախկին տեղն անհայտ. այժմ գտնվում է ս. Հարություն եկեղեցու հարավային մուտքի մոտ։ Խաչքեերից ներքև՝ փորագրված է.*

ԱՅՐԻ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐԻ /ԻՇԽԱՆՈՒՀԻ/ԵՂԻՍԱԲԷԹ ԽԱՉԱՏՐԵԱՆ/
ԱԲԱՄԵԼԻՔ-ԼԱԶԱՐԵԱՆՑ /ԾՆԱՒ Ի 27 ՅՈՒՆՎԱՐԻ 1832 ԱՄԻ/
ՎԱԽՃԱՆԵՑԱՒ Յ 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1904 ԱՄԻ.

Հայերեն արձանագրությանը զուգահեռ՝

ВДОВА ГЕНЕРАЛЪ-МАІОРА /КНЯГИНЯ/ ЕЛИЗАВЕТА ХРИСТОФОРОВНА/АБАМЕЛИКЪ-ЛАЗАРЕВА/ РОД. 27 ЯНВАРЯ 1832/ СКОНЧ. 8 НОЯБРЯ 1904 Г.

Տապանաքար, *սպիտակ մարմարից, բուսական և երկրաչափական զարդաքանդակներով։ Թևավոր խաչի աջ և ձախ կողերին հրեշտակներ են։ Ներքևում վազարյանների տոհմանշանն է (արծվի կոտրված աջ թև, երախաբաց նստած առյուծ), ստորին մասում քանդակված են ռուսական կայսրության բազմաթիվ շքանշաններ, ապա հայերեն և ռուսերեն փորագրված է.*

վեան (էջ 217)։ Այդ «Սարբովեանը» հիշատակվում է մեկ այլ արձանագրության վերծանության մեջ ևս. 1806 թ. սեպտեմբերի 10-ին Սարգիս (Սերգեյ) Նայու Լոռու Մելիքյանը ս. Եկատերինա եկեղեցուն նվիրում է ոսկեզօծ մի խալ. «Ցաղագս հանգուցեալ զուգակցոյն... Մարիամին, որ է դուստր հանգուցեալ Մովսէս Սարբովեանի (իմա՝ Սարաֆյանի)» (Նույն տեղում, էջ 219)։

[10] А. П. Базиянц, Кто знает этих стихи («Литературная Армения», 1977, № 8, с. 110).

ԶԲԱՐԻՕՔ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՏԵՐԱԶՄԵՑԱՑ,
ԶԷՆՐԱՅՍՆ ԿԱՏԱՐԵՑԻ, ԶՀԱԻԱՏՆ ՊԱՀԵՑԻ,
Բ. ՏԻՄ. Գ, 7.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ/ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԽԱԶԱՏՐՈՅ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ /ԼԱԶԱՐԵԱՆՑԻ/, ԾՆԵԼՈՅ Ի ՄՈՍԿՎԱ Ի 1789 ԱՄԻ/ ԵՒ ՎԱԽՃԱՆԵԼՈՅ յ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1871 ԱՄԻ։

ПОДВИГОМЪ ДОБРЫМЪ ПОДВИГАХ/СОТЕЧЕНІЕ СКОНЧАЛЪ, ВЕРУ СОБЛЮДАЛЪ
АП. ТІМ. ПОС. КЬ ГЛ. Д, СТР. 3
ЗДЕСЬ ПОГРЕБЕНО ТЕЛО/ДЕЙСТВИТЕЛЬНАГО ТАЙНАГО СОВЕТНИКА/ХРИСТОФОРА ЕКИМОВИЧА ЛАЗАРЕВА, РОДИВШЕГОСЯ ЬЬ МОСКВЕ ВЪ 1789 ГОДУ/, УМЕРШАГО 9-ГО ДЕКАБРЯ 1871 ГОДА.

Լազարյան տոհմի առավել հայտնի կոթողների մի մասը, ինչպես նշվեց, տեղափոխված է Ալ. Նևսկու մենաստանի ցուցասրահ։ Հայկական գերեզմանոցից այստեղ է բերվել ականավոր քանդակագործ, ակադեմիկոս Մարտոսի ձեռքով կերտված մահարձան-խմբաքանդակը (1802 թ.)։ Ստորև տալիս ենք այդ հուշակոթողի արձանագրությունները։

Պալաքար, սպիտակ մարմարից, ագուցված է հուշարձանի կենտրոնական մասում, վրան գեղեցիկ կցագրերով փորագրված է.

«ԱՌԱՋԻ ԱՅՍՄ ՏԱՊԱՆԱԳՐԻ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԿԱՌՈՒՅԱՆՈՂԻ ՏԱՃԱՐԻՍ ԳԵՐԱ /ՀՌՉԱԿ/ /ԱՌՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՅԻ ԵՒ ՍԼՐԲԼՈՅՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՅ/ ԱՍՊԵՏԻ ՅՈՀԱՆՆԻՍԻ ՈՐԴԻՈՅ ԵՂԻԱԶԱՐԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ. ԾՆԵԱԼ ՅԱՄԻ 1735 ՆՈՅԵՄԲԵՐԻ 23, /ՀԱՆԳԵԱԻ ԱՌ ՏՐ Ի 1801, ՀՈԳՏԵՄԲԵՐԻ 24.

Ապա՝ ռուսերեն.

ПРЕДЪ СЕЮ НАДПИСЬЮ ПОЧІЕТЪ ТЕЛО СООРУДИТЕЛЯ ХРАМА СЕГО ДОБ[ЛЕСНАГО] МУЖА ДЕЙСТВИТЕЛЬНАГО/ СТАТСКАГО СОВЕТНИКА И ОРДЕНА СВЯТОГО ИОАННА ІЕРУ/САЛИМСКАГО КОМАНДОРА ИВАНА ЛАЗАРЕВИЧА ЛАЗАРЕВА,/ ПРОСЛАВИВШАГОСЯ МНОГИМИ ПОЛЕЗНЫМИ ДЕЯНИЯМИ И БЛАГОЧЕСТИВОЮ ЖИЗНЕЮ/РОДИВШАГОСЯ ВЪ ДЖУЛЬФЕ ВЪ ЛЕТО 1735-Е НОЯБРЯ 23-ГО/И СКОНЧАВШАГОСЯ 1801 ОКТЯБРЯ 24 ДНЯ.

Սրանից դեպի ձախ, Լազարյանների ընտանեկան հուշարձանախմբի կողին կա հայերեն և ռուսերեն արձանագրություն.

ԱՍՏ Ի ՍՏՈՐԵՒ ԱՐՁԱՆԱԳՐԻՍ ԿԱՅ ՄԱՐՄԻՆ ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻՈՅ ԻՄՈՅ ԱՆՁՆԱՊԱՀ ԳՆԴԻ ՇՏԱՊՍ ՌՈՍՏԻՍ/ՏԷՐ ԱՐԻ ՁՈՐԱԿԱՆԻ ԵՒ ՁԱՆԱՁԱՆ ՆՇԱՆԱՅ ԱՍՊԵՏԻ ՅԱՐՈՒԹԻ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, ՈՐ Ի 1813 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 Ի ՅԱՐԻՒՆԱՀԵՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԵՑՄԱՆ ԼԷՅՊՅԻՔ ՔԱՂԱՔԻ՝ ԱՆԿԵԱԼ ԷԱՌ ՁՊՍԱԿ ՆԱՀԱՏԱԿՈՒԵ/ԱՄԱՅ ԻԲՐ 22 Ի ՅԱՒԷՏ ՏՈՁՈՐՈՒՄՆ ԱՂԵԱՅ ԻՒՐՈՅ ԾՆՈՂԱՅ, ՍԻՐԱԿԱՆ ԵՂԲԱՐՑ, ՔԵՐՑ ԵՒ ԻՄՈՅ ԱՊԱԲԱԽՏ ՀՕՐՍ/ՅՈՎԱԿԻՄ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻՍ.

ЗДЕСЬ ПОЧІЮТЪ ПЛАЧЕВНЫЕ ОСТАТКИ ЛЮБЕЗНЕЙШАГО СЫНА МОЕГО ЮНАГО/ВОИНА ЛЕЙБЪ ГВАРДИИ ГУСАРСКАГО ПОЛКА ШТАБСЪ —РОТМИЙСТРА И/ РАЗНЫХ ОРДЕНОВЪ КАВАЛЕРА БЛАГОРОЖДЕННАГО АРТЕМІЯ ЛАЗАРЕВА,/КОТОРЫЙ ВЪ КРОВОПРОЛИТІОМЪ СРАЖЕНІИ ПОДЪ ЛЕЙБЦИГОМЪ ОКТЯБРЯ 4-ГО/1813 ГОДА, ЖИЗНІЮ СВОЕЮ ЗАПЕЧАТЛЕЛЪ ВЕНЕЦ СЛАВЫ. НА 22-МЪ ГОДУ/ВОЗРАСТА К БЕЗУТЕШНОЙ ПЕЧАЛИ МАТЕРИ, БРАТЬЕВ/СЕСТЕРЪ И МЕНЯ О ПОТЕРЕ ЕГО СКОРБІЮ УДРУЧЕННАГО/ОТЦА ЕКИМА ЛАЗАРЕВА.

Հուշարձանախմբի վերին կենտրոնական մասում Հարություն Լազարյանի դափնեպսակով եզերված դիմաքանդակն է, փոքր-ինչ ներքև, ձախից, երկար սքեմով, դլխաբաց հայրը՝ Հովակիմ Լազարյանը, հայացքը վեր հառած, վշտալի դեմքով, ձախ ձեռքը պարզած դեպի ողբացող մայրը։ Աջ կողմում՝ Հարության մայրն է՝ ծալքավոր շրջազգեստով, հերարձակ, կռացած որդու դիմաքանդակի առջև։ Կենտրոնական մասում, ուղղանկյուն-քառանկյուն շրջանակի մեջ ագուցված մարմարակերտ սալաքարին հիշատակություն է.

ПАМЯТИ ПОЧИВШИХЪ И ЗДЕСЬ ПОГРЕБЕННЫХЪ/ ГРАФА ИВАНА ЛАЗАРЕВИЧА /И/ СЫНА ЕГО ГРАФА АРТЕМІЯ /ЛАЗАРЕВЫХЪ/
ПАМЯТНИКЪ СЕЙ ИЗВАЯНЪ ВЪ 1802 ГОД. ДЕЙСТ. СТ. СОВ. АКАДЕМИКОМЪ МАРТОСОМЪ.

Սրա միջին մասում քանդակված է թռչունի թև, թավամազ բաշով նստած առյուծ և վրձնանման մազափնջերը ներքև կախված խաչաձևված ջահակոթեր։ Թռչունի թևից վեր կա քանդակազարդ թագ (վարսակալ), որից ցած՝ հայերեն և ռուսերեն արձանագրություն.

ԱՍՏԷՆ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՅ ՄԱՐՄԻՆ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՄԱՅՅՈՐԻ ԱԶՆՈՒԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵՒՆԻ՝ ՈՐԴԻՈՅ ԳԵՐԱՅ /ՀՌՉԱԿ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ ՋՈՒՂԱՅԵՅԻՈՅ, ԾՆԵԼՈՅ ՅԱՄԻ ՏՆ 1768 ՅՈՒՆԻՍ 24-ԻՆ /Ի 1791 ՅՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ Ի ՄՈՐՄՈՔՈՒՄՆ ՍՐՏԻՑ ԾՆՈՂԱՅ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՆԱԿՑԱՅ ԱՆԴՐԱՓՈԽԵ/ՅԵԼՈՅ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՍ, ՈՐՈՅ ՅՇՏԿ Ի ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ ԿԱՅ.

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ ПРЕМІЕРЪ МАІОРА БЛАГОРОЖДЕННАГО/ АРТЕМІЯ ИВАНОВИЧА ЛАЗАРЕВА, РОДИВШАГОСЯ ВЪ 1768 ІЮНЯ 24-ГО И КЪ/НЕУТОМИМОЙ СКОРБИ РОДИТЕЛЕЙ И ВСЕХЪ КРОВНЫХЪ СВОИХЪ ИЗЪ СЕЙ/ВЪ ВЕЧНУЮ ЖИЗНЬ ПЕРЕСЕЛИВШАГОСЯ 1791 ГЕНВАРЯ 12-ГО ДНЯ

Հուշատախտակ, սպիտակ մարմարից, վրան Լազարյանների տոհմանշանը, խաչաձև խոնարհված դրոշներ և սրեր, ներքևում հայերեն և ռուսերեն փորագրված է.

ԿԱՏԱՐԻՆԷ ԻՎԱՆՈՎՆԱՅ ԼԱԶԱՐՈՎԵԱՆ ՍԵՐԵԱԼ ՅԱԶԳԷ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ, /ԱՄՈՒՍԻՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՅՈՀԱՆՆԷՍԻ/ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐՈՎԻ ԵՎ ՍՐՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՅ ԱՍՊԵՏԻ, /ԿՈՄԱՆՏՈՐ ԿՈՉԵՅԵԱԼ։ ԾՆԵԱԼ Է Ի 1 ԱՊՐԵԼԻ 1750 /ԵՒ ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 18 ՅՈԳՈՍՏՈՍԻ 1819 ԹՒԻ Ի 70 ԱՄԱՅ ԿԵՆԻ ԻՒՐՈՅ.

КАТЕРИНА ИВАНОВНА ЛАЗАРЕВА/, УРОЖДЕННАЯ МИРЗАХАНОВА/, СУПРУГА ДЕЙСТВИТЕЛЬНАГО СТАТСКАГО СОВЕТНИКА И КОМАНДОРА/ ИВАНА ЛАЗАРЕВИЧА ЛАЗАРЕВА,/РОДИЛАСЬ 1-ГО АПРЕЛЯ 1750 -ГО, А СКОНЧАЛАСЬ 18 АВГУСТА 1819-ГО ГОДА/ НА 70-МЪ ГОДУ ЖИТІЯ ЕЯ.

Ալ. Նևսկու մենաստանի կենտրոնական մուտքի աջ պատին փակցված բրոնզաձույլ շրջանակով սալատախտակի վրա կերտված են թմբուկներ, սրեր, այլևայլ զենքեր։ Վերևում՝ յուղանկարկ սրբանկար, որից ներքև կարդում ենք.

КНЯЗЬ ИВАНЪ СЕМЕНОВИЧЪ АБАМЕЛИКЪ/ ЛЕЙБЪ ГВАРДІИ АРТИЛЕРІИ ГЕНЕРАЛЪ-МАІОРЪ/ И/ РАЗНЫХЪ ОРДЕНОВЪ КАВАЛЕРЪ/ РОДИЛСЯ 1768 ГОДА ГЕНВАРЯ 7-ГО ДНЯ, /СКОНЧАЛСЯ 1828 ГОДА АВГУСТА 23-ГО ДНЯ[11].

Կորոգ. սև գրանիտից, գեղաքանդակ նախշերով։
Արևելյան կողին.

ՇԱՄԱԽԵՑԻ /ՁՕՐԱՊԵՏ ԱՂԱՍԻ ԲԷԿ ԱՒՇԱՐԵԱՆՑ

ГЕНЕРАЛЪ ОТЪ КАВАЛЕРІИ АГАСИ БЕКЪ /АВШАРОВЪ, РОДИЛСЯ ВЪ ШЕМАХЕ 1834 Г./СКОНЧАЛСЯ В/ПЕТЕРБУРГЕ 1907 Г./ 29 ЯНВАРЯ.

Հարավային կողին.

СЕЙ ПАМЯТНИКЪ ПОСТАВЛЕНЪ/ОТЪ СЕСТЕРЪ ГЕНЕРАЛА ВОСКИ КАРОГЛАНОВОЙ И АМАСПЮРЪ НИКИТОВОЙ.

Կորոգ, գորշավուն գրանիտից։
Արևելյան կողին կցագրով.

ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊՕԴՊՕԼԿՈՎՆԻԿ /ԵՒ ՁԱՆԱՁԱՆ ՆՇԱՆԱՑ ԱՍՊԵՏԻ /ԱՒԵՏԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՍԵՐԵԲՐՈՎԻ, ԾՆԵԼՈՅ Ի 6 ԱՊՐԻԼԻ 1769 ԵՒ ՀԱՆԳՈՒՅՑԵԼՈՅ /Ի 6 ՕԳՈՍՏՈՍԻ 1830 ԱՄԻ Ի ՀԱՍԱԿԻ ԻԲՐ 61 ԱՄԱՑ.

Արևմտյան կողին.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ ПОДПО/ЛКОВНИКА, РАЗНЫХ ОРДЕНОВЪ КАВАЛЕРА АВЕРІАНА ГРИГОРЬЕВИЧА/СЕРЕБРОВА/ РОДИВШАГОСЯ ВЪ 1769 ГОДУ, АПРЕЛЯ 6 ДНЯ, УМЕРШАГО 6 АВГУСТА/1830 ГОДА. ЖИТИЯ ЕГО БЫЛО 61 ГОДЪ.

Ավ. Սերեբրովը եղել է գեներալ-պորուչիկ Վ. Ա. Զուբովի թարգմանիչը, որի մոտ 1795—1797 թթ. ծառայել է նշանավոր Հարություն Արարատյանը[12]։ Ավ.

---

11 *Տեղափոխված է Սմոլենսկյան հայկական գերեզմանոցից։*
12 *Տե՛ս* «Жизнь Артемия Араратского», Л., 1980, с. 218.

Սերեբրովը քաջ գիտեր Հյուսիսային Կովկասի տարածքում ապրող ազգերի ու ազգությունների սոցիալ-քաղաքական պատմությունը։ Նրա գրչի արգասիք են մի շարք ուսումնասիրություններ, որոնցից արժեքավոր է «Краткое историческое описание северной и южной части дагестанской Персии, примерно о числе дворов, о религии, о свойстве, обычаях и промыслах жителей, обитающих в провинциях Дербентской, Кубинской, Салянской, Бакинской, Шемахинской, Шекинской и под чым владением», учинено майором Серебровым, ч. I, II, М., 1958, *աշխատությունը։ Ավ. Սերեբրովի նյութերը օգտագործել են Դաղստանի պատմությամբ, աղղագրությամբ և աշխարհագրությամբ զբաղվող մասնագետները*[13]։

Լենինգրադի հայկական գերեզմանոցում են թաղված 1812 թ. հայրենական պատերազմի մասնակից մի շարք հայորդիներ։ Սրտաուռչ է Բորոդինոյի ճակատամարտում վիրավորված կապիտան Զաալ Փիրալյանի եռալեզվյան (հայերեն, վրացերեն, ռուսերեն) հետևյալ տապանագիրը.

ՈՐՊԷՍ ՓԱՓԱԳԻ ԵՂՋԵՐՈՒ ՅԱՂԲԻՒՐՍ ՋՈՒՐՑ /ԱՅՆՊԷՍ ՓԱՓԱԳԻ ԱՆՁՆ ԻՄ ԱՌ ՔԵԶ ԱՂՍՏՈՒԱՂՄ /Ի 1812 ԱՄԻ, ԳՈԼՈՎ Ի ՁԱՆԱՁԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՆՍ /ԸՆԴԴԷՄ ԹՇՆԱՄԵԱՑ ՀԱՅՐՆՆԵԱՑ /ԽՈՅՆԱԼ ԵՂԵԻ/ ԳՆՏԱԿԱԻ ԱՌ ԲՈՌՕԴԻՆԱԻ ԵԻ ԱՅՆՈՒ ԻՍԿ ԷԱՌ ԶՎԱՂՃԱՆ Ի 1820 ԱՄԻ Ի 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԵԻ ՝ 33 ԱՄ ՀԱՍԱԿԻ ԳՎԱՐԴԻՈՒ ՇՏԱՊՍ ԿԱՊԻՏԱՆ ԶԱԱԼ /ՖԻՐԱԼՈՎ։

Ապա՝ մանր տառերով ռուսերեն.

ИМЪ ЖЕ ОБРАЗОМЪ ЖЕЛАЕТЪ ЕЛЕНЪ/НА ИСТОЧНИКИ ВОДНЫЯ, СИ ЦЕ ЖЕ ЖЕЛАЕТЪ/ДУША МОЯ КЪ ТЕБЕ БОЖЕ. ВЪ 1812-МЪ ГОДУ БЫЛЪ ВЪ РАЗНЫХЪ СРАЖЕНІЯХЪ/ПРОТИВ ВРАГОВЪ ОТЕЧЕСТВА, РАНЕНЪ/ПУЛЕЮ ПОДЪ БОРОДИНЫМЪ И ТОЙ/СКОНЧАЛСЯ ВЪ 1820-МЪ ГОДУ СЕНТЯБРЯ/ 12-ГО ИМЕВШИ ОТ РОДУ 33 ГОДА ГВАРДІИ /ШТАБСЪ КАПИТАНЪ ЗААЛЪ ФИРАЛОВЪ[14].

Տապանաքար, *կարմիր գրանիտից, բավական մեծ չափերի, գտնվում է ս. Հարությունն եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում, վրան՝ 15 տող հայերեն և 3 տող ռուսերեն արձանագրություն.*

ԵԴԵԱԼ ՄԱՐՄԻՆՔՆ Ի ՆԵՐՀՈՂՈՅՍ ՏԱՊԱՆԻ
ԵՕԹՆ ԹՈՌԱՄԲՔ ԸՍՏ ՓՐԿՁԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԻ.
ՊԱՆԴԽՏԵԼՈՎ ՍԱ ՅԱՇԽԱՐՀԷՆ ԻՒՐ ՆԱԽՆԻ
ԹԻՒՆ ՀԱՁԱՐ ԵՕԹՆ ՀԱՐԻՒՐ ԿՅԵՑՅԵԱԼ
ՈՒԹՍՈՒՆ ԱՄՕՔ ԱՅՍ ԿԵՆՅԱՂՈՅՍ... (եղծված է)
ԱՐԴ ՀԱՄԱՅՆԻՅՍ ԱՅՍ Է ՏՈՒՆԸ ՄԵՐ ՆԱԽՆԻ,
ՈՎ ԵՂԲԱՐՔ ԻՄ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՍՈՅՆ ՇԻՐՄԻ.
ՊԱՊՆ ՍԱՀԱԿ ԼՕՌՈՒ ՄԷԼԻՔ ՔԱՁԱՁՆԻ,
ՈՐՔ ԿԱՆ ՁՈՒԵԱԼ ՅԱՆԱՆՑ ԿԵՆԱՅՆ ՀԱՅՐԵՆԻ.

---

13 «История, география и этнография Дагестана XVIII — XIX вв.» (Архивные материалы под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, М., 1958, с. 138, 155, 172, 195—196); А. В. Фадеев, Россия и Кавказ в первой трети XIX в., М., 1960, с. 53; О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII в., М., 1966, с. 79—80.

14 *Կողքի նույնատիպ տապանաքարին փորագրված է վրացերեն 6 տող, ապա և ռուսերեն, ուր ասվում է, որ 1823 թ. մայիսի 29-ին վախճանվեց հայազգի վրաց իշխան Սիմեոն Թոմանովը։ Նույն 1823 թ. է վախճանվել* «Колежский советникъ и кавалер Годевзіи Павлович Фиралов»*-ը, որի տապանագիրն ունի վրացերեն արձանագրություն։*

ԵԿՆ ԵԻ ԵԿԱՑ Ի ՆԱՀԱՆԳԻՍ ՍԱՀՄԱՆԻ՝
ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԱՅՈՐ ՍԱՐԳԻՍ ՅԱՅՍ ԿԵՆԻ
ԸՆԴ ԻՆՆՄՆԻ ՄԱՐՏԻ ԸՆՆԻՆ ՎՃՌԵՑԵԱԼ,
ԲԱՐԻ ԱՆՈՒԱՄԲ ԱՍՏԷՆ ԱՌ ՏԷՐ ՓՈԽԵՑԵԱԼ.
ԱՐԱՍՑԷ ՏԷՐ ՎԵՐԻՆ ԿԵՆԱՑՆ ԱՐԺԱՆԻ՝
ՏԱՋԻՔ ՍԱՅԱ ՄԷԿ ՀԱՅՐ ՄԵՐԻԻ ՈՂՈՐՄԻ։

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОГРЕБЕНЫ ТЕЛА РАБЪ БОЖІИХЪ ДВОРЯНИНА/ ИСАІА ЛОРИСЪ-МЕЛИКОВА, С ОСМЬЮ ВНУЧАТЫ, КОТОРЫЯ ВЗИРАЮЩИХ/ НАДГРОБІЕ ПРОСЯТЬ ТВОРЦА НЕБА И ЗЕМЛИ МОЛИТВ ОПРОІШЕНІИ И ДАРОВАНІИ ИМЪ ВЕЧНАГО БЛАЖЕНСТВА.

Կոթող, սև գրանիտից, քառակող, դրված կարմիր գրանիտե պատվանդանի վրա։ Հյուսիսային կողին ագուցված է եղել դիմաքանդակ, որ մեր այցելության ժամանակ (1979 թ.) տեղում չէր։ Արևելյան և արևմտյան կողերին ամրացված են սպիտակ մարմարակերտ սալաքարեր, որոնց վրա փորագրված են հայերեն և ռուսերեն վիմագրություններ[15]։ Ճակատային մասում, շրջանակի մեջ, ուղղաթև խաչ է, որից ցած, նույնատիպ շրջանակում, թագակիր գլուխ։ Ձախ մասում՝ խոնարհված դրոշներ և ռազմական թմբուկներ են, աջում՝ առաջին թաթերը թագակիր մարդու ուսերին հենած առյուծ։ Հայերեն արձանագրությունը 11 տող է.

ՅԱՅՍ ՏԱՊԱՆ ԱՄՓՈՓԵԱԼ ԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԵԻ ՌՍ/ԿԵՐՔ ՅՈՎԱԿԻՄԱՅ ՈՐԴԻՈՅ ԲԱՐՍՂԻ /ԽԱՍՏԱՏԵԱՆԻ, ՈՐ ԷՐ ԱՍՏԻՃԱՆԱՒ /ՂԵՆԵՐԱԼ ՄԱԻՈՐ ԵԻ ԿԱԻԱԼԵՐ ՆՇԱ /ՆԱՑՆ ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԻ ԵԻ ՅԱՂԹՈ /ՂԻՆ ԳԵՈՐՔԱՅ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻ/ ՃԱՆԻ ԵԻ Ս|Ր|Բ|Ո|Յ ԱՌԱՔԵԼԱՊԱՏԻԻ ԻՇ /ԽԱՆԻՆ ՎԼԱՏԻՄԻՐԻ ՉՈՐՐՈՐԴ ԱՍ/ՏԻՃԱՆԻ. ԾՆԵԱԼ ԷՐ ՅԱՄԻ ՏՆ 1756 /Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ. ՎԱԽՃԱՆԵՑԱՒ/ՅԱՄԻ ՏՆ 1809 Ի ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ։

Գեներալ Հովակիմ (ռուսական աղբյուրներում՝ Аким, Еким)[16] Բարսեղի Խաստատյանը եղել է Ալ. Սուվորովի մերձավորագույն զինակիցներից մեկը։ Նա Բոգդան Խաստատյանի (Խաստատովի) եղբայրն էր, որը Սուվորովի՝ Աստրախանում եղած ժամանակ ծանոթացել էր նրա հետ և մտերմացել[17]։ Հ. Խաստատյանը աչքի ընկավ ռուս-թուրքական երկրորդ պատերազմի (1787—1791) տարիներին։ Նրա հրամանատարությամբ գործող զորագնդերը փախուստի մատնեցին թուրքերի 5000-անոց բանակը[18]։ Հ. Խաստատյանի տաղանդը հատկապես փայլեց Իզմայիլ բերդի գրավման ժամանակ։ Նա քաջությամբ և վաստակով է արժանացել գեներալ-մայորի աստիճանի և պատվանշանների[19]։ Գեներալ Հ. Խաստատյանը ամուսնացած էր Մ. Յու. Լերմոնտովի տատիկի՝ Ելիզավետա Ալեքսեևնա Արսենևայի (ծնյալ Ստոլիպինա) քույր Եկատերինայի հետ[20]։ Մեծ բանաստեղծը հաճախ էր լինում Պյատիգորսկի Խաստատյանների բնակարանում։

---

15 Մեր այցի ժամանակ ռուսերեն արձանագրությամբ սալաքարը նորոգման նպատակով տեղահանված էր և գտնվում էր վերականգնող քանդակագործ Վ. Վ. Սարոգիի մոտ։

16 Մ. Գ. Ներսիսյան, Ա. Սուվորովի հայ բարեկամներն ու զինակիցները (ՊԲՀ, 1980, № 4, էջ 51)։

17 М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, ч. I, Ереван, 1956, с. 102—103.

18 Մ. Ներսիսյան, նշվ. հոդվ. էջ 52։

19 Նույն տեղում, էջ 51։ Հմմտ. «Собрание актов, относящихся к образованию истории армянского народа», ч. III, М., 1838, с. 302.

20 А. П. Базиянц, նշվ. հոդվ., էջ 108—110։

Լենինգրադի քաղսովետի որոշմամբ, Մշակույթի հուշարձանների գլխավոր վարչությունը այժմ ձեռնամուխ է եղել Հ. Բ. Խաստատյանի դամբարանակոթողի նորոգման աշխատանքներին։

Լենինգրադի հայկական գերեզմանոցում են թաղված «8-րդ կլասի ասպետ», «սրբոյն Վլադիմիրի 4-րդ աստիճանի» շքանշանակիր Պողոս Պետրոսի Շարիսանովը, «գործով զինուոր եւ կապիտան» ջուղայեցի Աստվածատուր Հայրապետի Բաշխումյանը, «զինուորական օֆիցեր» ղզլարեցի Սարգիս Հովհաննեսի Գալստյանը՝ «ի տոհմէն Բօրաղանեանց», «ռուսաց զօրացն կապիտան» Կարապետ Եսայու Մանուչարյանցը (Մանուչարով), Պետերբուրգի կայսերական համալսարանի ուսուցչապետեր Քերովբե Պատկանյանը, «տաճկերեն լեզուի» դասախոս Հովհաննես Ամիդին և շատ ուրիշներ։

Վիմագրական արշավախումբը արժեքավոր արձանագրություններ հավաքեց նաև Մոսկվայի տարածքից։ Դրանք իրենց բովանդակությամբ հիմնականում հիշատակագրային են։ Անսպասելիորեն ոչ մի արձանագրություն չհայտնաբերվեց Լազարյան ճեմարանի հսկայածավալ շենքի պատերին։ Արձանագրություն ունի միայն շքամուտքի տոչև կանգնեցված հուշասյուն-կոթողը։ Սրա չորս կողերին ագուցված են պատկերաքանդակներ. գրանց տակ փորագրված են հիշատակագրություններ։

Արևելյան կողի դիմաքանդակից ներքև.

СЕЙ ХРАМЪ НАУКЪ ВОЗДВИГНУТЪ
ВЪ ЦАРСТВОВАНІЕ ГОСУДАРЯ ИМПЕРАТОРА
АЛЕКСАНДРА 1 *ГО* ВЪ 1815 ГОДУ МАІЯ 10 ДНЯ
ИМПЕРАТОРЪ НИКОЛАИ I
ДАРОВАЛЪ ЛАЗАРЕВСКОМУ ИНСТИТУТУ
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ
ВСЕ ПРАВА И ПРЕИМУЩЕСТВА
ПРЕДСТАВЛЕННЫЯ ЛИЦЕЯМЪ
МАІЯ 10 ДНЯ 1848 ГОДА

Հարավային կողին ագուցված ապակեպատ շրջանակով դիմաքանդակը պատկերում է արևելյան դիմագծերով, գանգրահեր, թավ այտամորուսով գեղանի տղամարդու, որի պարանոցից ներքև երևում է ճարմանդավոր օձիքը։ Ստորև ոսկեզօծ գլխագրերով փորագրված է.

АННЕ СЕРГЕЕВНЕ ЛАЗАРЕВОЙ СУПРУГЕ
ІОАКИМА ЛАЗАРЕВИЧА, ПОЖЕРТВОВАВШЕЙ
ЗНАТНЫЙ КАПИТАЛЪ
ВЪ ПОЛЬЗУ ИНСТИТУТА
КАК ДОБРА МАТЬ СИРОТЪ
СЪ ГОРЯЧНОСТЬЮ ЛЮБИЛА
И ПАМЯТНИКЪ СЕБЕ
ВЪ СЕРДЦАХЪ ИХЪ УТВЕРДИЛА
ЛЕЙБЪ-ГВАРДИИ ГУСАРСКАГО ПОЛКА
ШТАБСЪ РОТМИСТРУ И КАВАЛЕРУ
АРТЕМІЮ ІОАКИМОВИЧУ ЛАЗАРЕВУ
ПОЖЕРТВОВАВШЕМУ ЗНАТНЫЙ КАПИТАЛЪ
ВЪ ПОЛЬЗУ ИНСТИТУТА
СРЕДЬ МИРА БЛАГ ТВОРЕЦЪ
ГРОЗА СРЕДИ ВРАГОВЪ,
ВО ЦВЕТЕ ОНЪ ПАЛЪ
ЗА ВЕРУ И ОТЦОВЪ
ПРОФЕССОРЪ АЛЕКСЕЙ МЕРЗЛЯКОВЪ[21].

---

21 Ըստ երևույթին բանաստեղծության հեղինակն է։

Հուշասյուն-կոթողի արևմտյան կողին ճեմարանի հիմնադիր Հովհ. Լազարյանի դիմաքանդակն է՝ նույնպես ապակեծածկ շրջանակի մեջ, որից ցած փորագրված է պրոֆ. Ալ. Մերզլյակովի բանաստեղծությունը.

ДЕЙСТВИТЕЛЬНОМУ СТАТСКОМУ СОВЕТНИКУ И КОМАНДОРУ
ИВАНУ ЛАЗАРЕВИЧУ ЛАЗАРЕВУ
ОСНОВАТЕЛЮ ИНСТИТУТА
ОТЪ ДРЕВНЯ ПЛЕМЕНИ АРМЕНИИ РОЖДЕННЫЙ
РОССІЕЙ—МАТЕРЬЮ БЛАГОЙ УСЫНОВЛЕННЫЙ.
ГАЙКАНЦЫ! ВАШИХЪ ОНЪ СИРОТЪ НЕ ПОЗАБЫЛЪ
РАЗСАДНИКЪ СЕЙ ДУШИ ПРИЗНАТЕЛЬНОЙ ТВОРЕНЬЕ
ДАРУЕТЪ ЧАДАМЪ ЗДЕСЬ ПОКОЙ И ПРОСВЕЩЕНЬЕ
ОТЧИЗНЕ ТОЙ И СЕЙ ОНЪ ДОЛГЪ СВОЙ ЗАПЛАТИЛЪ
ПРОФЕССОРЪ
АЛЕКСЕЙ МЕРЗЛЯКОВЪ

Հյուսիսային կողին մարմարակերտ թագի, թուչունի կտրված թևի և երախաբաց պառկած առյուծի կոմպոզիցիոն բարձրաքանդակն է, որ հանդիպում է Լազարյանների այլ մահարձան-կոթողների վրա ինչպես Լենինգրադում, այնպես էլ Մոսկվայում։ Նշած բարձրաքանդակի ներքևում գլխատառերով փորագրված է.

ІОАКИМУ ЛАЗАРЕВИЧУ ЛАЗАРЕВУ
ИСПОЛНИТЕЛЮ ВОЛИ ОСНОВАТЕЛЯ
БЛАГОТВОРИТЕЛЮ
ИНСТИТУТА
СЕЙ БРАТА СВОЕГО ДОСТОЙНЕЙШИЙ РЕВНИТЕЛЬ
НАЧАТЫЙ ПОДВИГЪ УСТРОИЛЪ РАСШИРИЛЪ
СОПЛЕМЕННЫХЪ ПОКРОВЪ БЕЗРОДНЫХЪ ОХРАНИТЕЛЪ
ДЛЯ ЦЕРКВИ, ДЛЯ НАУКЪ, ДЛЯ БЛАГА БЕДНЫХЪ ЖИЛЪ
ПРОФЕССОРЪ
АЛЕКСЕЙ МЕРЗЛЯКОВЪ

ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Աշոտ Պատվականի Բազյանցը մեզ տրամադրեց պղնձյա փոքրիկ մի թիթեղ (30×40 սմ), որը ժամանակին ագուցված է եղել Լազարյան ճեմարանի մեծ դահլիճի պատին։ Հուշատախտակի վրա միջին մեծության տառերով փորագրված է.

ОТЪ ОБИТАЮЩИХЪ ВЪ РОССІИ АРМЯНЪ ВЪ
ПАМЯТЬ/ПЯТИДЕСЯТИЛЕТНЯГО ЮБИЛЕЯ 1865
ГОДА
1779—ОСНОВАНІЕ АРМЯНСКИХЪ ЦЕРКВЕЙ ВЪ
МОСКВЕ И БЪ С.—ПЕТЕРБУРГЕ
1815—ОСНОВАНІЕ ИНСТИТУТА
1848—УЧРЕЖДЕНІЕ ЛИЦЕЯ
1851 | УЧРЕЖДЕНИЕ МАЛОЛЕТНЯГО ОТДЕЛЕНИЯ
1865 |
И
ПОЖЕРТВОВАНІЕ 200000 Р. С. ПОПЕЧИТЕЛЕМЪ ТАЙНЫМЪ
СОВЕТНИКОМЪ
И КАВАЛЕРОМЪ ХРИСТОФОРОМ ЕКИМОВИЧОМЪ
ЛАЗАРЕВЫМЪ

Կողով, սև մարմարից արևմտյան կողին.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ /ՂԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ/ ՊՈՂՈՍԻ ՄՈՎՍԻՍԵԱՆ ՄԵԼԻՔԵԱՆՑ, ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ Ի 30 ՅՈՒՆԻՍԻ /1848 ԱՄԻ Ի ՀԱՍԱԿԻ ԻԲՐ 72 ԱՄԱՑ.

Այնուհետև ռուսերեն՝

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ГЕНЕРАЛЪ-МАІОРА И КАВАЛЕРА ПАВЛА МОИСЕЕВИЧА МЕЛИКОВА, ПРЕДСТАВИВШІАГОСЯ КО ХРИСТУ 30 ІЮНЯ 1848 ГОДА В ВОЗРАСТЕ 72 ГОДА ОТ РОДУ.

Արևելյան կողին.

ԸՂՀԱՐԿՆ ԿԱՅՍԵՐ ՀԱՏՈՅՑ ՍԱ ԿԱՅՍԵՐ,
ՈՐՊԷՍ ԲԱՆՆ ԱՍՏՈՒԱԾ ԵՏ ՄԵՋ Ի ՊԱՏՈՒԷՐ.
ԵՎ ՁԻՒՐ ԿԵԱՆՍ ՀԱՆԴԷՊ ՀԸՐՈՑ ԵՒ ՍԸՐՈՑ
ՏԻՐԱՍԷՐ ԳՈԼՈՎ ՀԵՐՈՍ ԱՆՎԵՀԵՐ,
ԿՆՑՑԷ ԱՆՁԻ ԻՄ ՁԻ ԸՂՔԵՁ ՕՐՀՆԵՍՑԷ՝
ԱՂՕԹԷՐ ԱՌ ՏԷՐ ՈՄԸՆ ՄԱՐԴԱՐԷ
ՍԱ ԳՈԳՋԻՐ ԿԱՅՍԵՐ ԳՈՐԾՈՎՔ ԻՒՐ ՈՒՍԷՐ՝
ՄԵՌՑԻ ԱՆՁՆ ԻՄ ՁԻ ԳԱՀՈՑՔ ՔՈ ԿԵՑՑԷ,
ՁԻՆՈՒՈՐ ԴԻՒՑԱԶՈՒՆ ՔԱՋԻԿ ՍԱ ՄԱՐՏԵԱՒ,
ՄԻՆՁԵՒ ՔԱՋ ՁԵՌԸՆ ԹՆԴԱՆՕԹ ՏԱՐԱՒ
ՂԵՆԵՐԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՈՎ, ԹՈՇԱԿԱՒ
ԵՒ ԱՍՊԵՏՈՒԹԵԱՄԲ ՃՈԽ ՊՍԱԿԵՑԱՒ
ԲԱՅՑ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՐԿ ՍԱ ԱՍՏՈՒԾՈՑ
ՀԱՏՈՅՑ ՀՈԳԱԼՈՎ ՁԱՂՔԱՏԱՑ ՀՈԳԻՈՑ,
ԹԷ ԻՒՐ ԱՁԳԱԿՑԱՑ ԵՒ ԹԷ ՕՏԱՐԱՑ
ՊԱՏՐԱՍՏԵԱՑ ՍԵՂԱՆ ՏԸՐՈՎՔ ԴՐԱՄՈՑ
ՈՁ ՄԻԱՅՆ ՁԻՒՐ ԳՈՅՍ ԱՐԿ Ի ԳԱՆՁԱՆԱԿ
ԱՍՏՈՒԾՈՑ. ԱՅԼ ԵՒ ԵՂԵՒ ՕՐԻՆԱԿ
ՁՕՆԵՑԻՆ ՆՈՒԷՐՍ ՅԱՂՔԱՏԱՑ ՃԱՐԱԿ.
ԽՈՍՏԱՑԱՐ ՓՐԿԻՋ ՄԵՋ ԲԱՆԻՒ ՔՈՅԻՆ
Թ՝ ՈՂՈՐՄԱԾՔ ԳՏՑԵՆ ԱՆԴ ՁՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ,
ԱՂՔԱՏԱՍԻՐԻ ՏՈՒՐ ՀՈԳԻՈՑ ՍՈՐԻՆ
ՔՈ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՄԲ ՁՔՈՅԴ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ.
ԱՄԷՆ

Գեներալ Պողոս Մելիքյանցը Ղարաբաղի մելիքների շառավիղներից էր[22], ապրում էր Մոսկվայում, Հայկական նրբանցքի վրա, Մ. Լերմոնտովի տատի հարևանությամբ, ուր հաճախ էր լինում երիտասարդ բանաստեղծը։ Բորոդինոյի ճակատամարտի մասին Լերմոնտովը լսել էր Պողոս Մելիքյանից, Մեշչանինովների ընտանիքում հանդիպելիս[23]։

Մոսկվայի հայկական գերեզմանոցում են հանգչում ականավոր մտավորականներ Ներսես Հովսեփի Ներսիսյանը[24], Գրիգոր Ավետիսի Ջանշյանցը, Ստեփաննոս Նազարյանցը, Մսեր Գրիգորի Մսերյանցը, բանաստեղծ Սմբատ Շահազիզը, Լազարյան ճեմարանի պրոֆեսորներ Մկրտիչ Էմինը, Գրիգոր Խալաթյանցը, արևելյան լեզուների մագիստրոս Լազար Էմանուելի Լազարևը, Կարապետ Կոստանյանը, գեներալ Նիկողայոս Աղաթոնի Ակիմյանցը և շատ ուրիշներ, որոնց տապանաքարերի արձանագրությունները պատրաստվում են տպագրության «Դիվան հայ վիմագրության» հերթական պրակում։

Մոսկվայի պատմության կենտրոնական թանգարանի ֆոնդերում պահպանվող հայկական իրերի շուրջ 60 արձանագրությունները ուսումնասիրելիս մեր ուշադրությունը գրավեց № 31547 ОК[25] 13396 ցուցանմուշը։ Դա ոսկուց պատրաստված խաչ է (բարձր. 26 սմ), ընդելուզված կարմիր, կանաչ և կապույտ թանկարժեք քարերով, խաչեևերի ծայրերին՝ մարգարիտներ[26]։ Հակառակ երեսին ամրացված արծաթյա ռոմբաձև թիթեղի վրա փորագրված է 13 տողանոց հետևյալ արձանագրությունը.

ՍԲ /ԽԱՉՍ Ա/ՋԱՏԵՑԻ Ի ՅԱ/ՓԸՇՏԱԿՈՒ[ԹԵՆ] Է ԼԵՌՆԱԿԱՆ /ՕՍԻՑ ԻՄՈՎ ԱՐԴԵԱՄԲ ԵՍ ՂԱՋԻ/ԲԻԿՈՎ ԵՆԱՐԱԼ ՄԱՅՐՕՐ ԳԱԲՐԻԷԼ ԵՒ ԵՏՈՒ/ ՅԻՇԱՏԱԿ ՍՐԲԼՈՅՑ ԱԹԼՈՅԴՈՅՅՆ ԷՋՄԻ/ԱԾՆԻ Ի ՀԱՅՐԱ/ՊԵՏՈՒԹԵՅԱՆՅՆ ԵՓՐԵ/ ՄԱՅ Ս[Ր]Բ[Ա]Զ[Ա]Ն ԿԱԹՈ/ՂԻԿՈՍԻ Հ[Ա]Յ[Ո]Յ /1814/Ի։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ներկայացվող արձանագրությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մասնավորապես հայ-ռուսական սոցիալ-քաղաքական և մշակութային հարաբերությունների պատմությամբ զբաղվողների համար։

---

22 *Ռաֆֆի, երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 191։*

23 А. П. Базянц, *նշվ. հոդվ., էջ 109, նույնի՝* А. Д. Абамелек *(ՊԲՀ, 1968, № 4, էջ 24)։*

24 *Մոսկվայի կայսերական համալսարանի պրոֆեսոր Ն. Ներսիսյանը Ղարաբաղի Միրզա Ջաուսֆ (Հովսեփ) Ներսիսյանցի որդին էր. Հ. Ներսիսյանը պարսից շահի դիվանում վարում էր քարտուղարի պաշտոն (Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 352)։*

25 ОК—особая кладовая—Գ. Գ.։

26 *Կոթառը բոլորակի դրվագված է երկնասլաց նոճիների պատկերներով։*

ЭПИГРАФИЧЕСКИЕ СВЕДЕНИЯ ОБ АРМЯНО-РУССКИХ ОТНОШЕНИЯХ XVIII—XIX вв.

(по материалам Ленинграда и Москвы)

ГРИГОР ГРИГОРЯН

Резюме

Публикуемые впервые армянские эпиграфические надписи Ленинграда и Москвы содержат ценные сведения об армяно-русских политических, культурных и военных связях, о совместной борьбе двух народов против чужеземных захватчиков. В мемориальных надписях упоминаются видные военачальники, деятели науки и культуры, представители различных классов и слоев.